105 FEB 2013

ԽՍՀՄ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

ՀԱՐԿԵՐԻ ԶԵՎ ՏՈՒՐՔԵՐԻ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

№ 604/122

11 սեպտեմբերի 1939 թ.

Սխեմա յերեք

1939 ԹՎԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎՈՐՈՇՄԱՆ ՅԵՎ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի արտակարգ 4-րդ սեսսիայի կոչմից 1939 թվի սեպտեմբերի մեկին ընդունված գյուղհարկի օրենքը ընթացիկ տարում անցկացնելիս վճարողների հաշվառման, յեկամուտների վորոշման և գյուղհարկի հաշվարկման ժամանակ պետք է ղեկավարվել հետևյալ ցուցմունքներով.

1. Հաշվառումը կատարվում է յուրաքանչյուր գյուղխորհրդում հարկային գործակալի միջոցով չրջֆինբաժնի հարկային տեսչի ղեկավարությամբ:

2. Գյուղհարկ վճարողներին հաշվի առնելու համար ցուցակները կազմվում են հետևյալ ձևերով.

ա) կոլտնտեսական տնտեսություններին ձև № 1-ն ցուցակում.

բ) գյուղական վայրերում, գյուղական տնտեսություն ունեցող բանվորների, ծառայողների և արհեստագործական կոոպերատիվ արտելների անդամների տնտեսություններին, վորոնք հարկվում են գյուղհարկով կոլտնտեսականների համար սահմանված դրույքներով—ձև № 2-ն ցուցակում.

գ) մենատնտես գյուղացիական տնտեսություններին — ձև 3-ն ցուցակում.

դ) գյուղական տնտեսություն չունեցող բանվորների, ծառայողների, տնայնագործների, արհեստավորների և այլ քաղաքացիների տնտեսություններին—ձև № 4-ն ցուցակում:

3. Գյուղհարկով հարկվող բոլոր տնտեսություններում վոչ գյուղատնտեսական յեկամուտները հաշվի առնելու, նույնպես

մենատնտես գյուղացիական տնտեսություններում չուկայական յեկամուտները հաշվի առնելու համար, կազմվում են հարցաքննման ակտեր այդպիսի յեկամուտների առկայության և նրանց չափերի մասին հետևյալ ձևերում.

ա) ձև № 5–ն հարցաքննման ակտում հաշվի յեն առնվում կոլտնտեսական տնտեսությունների և կոլտնտեսականների դրույքներով հարկվող վոչ կոլտնտեսության անդամ տնտեսությունների վոչ գյուղատնտեսական յեկամուտները.

բ) ձև № 6–ն հարցաքննման ակտում հաշվի յեն առնվում մենատնտես գյուղացիական տնտեսությունների վոչ գյուղատնտեսական և չուկայական յեկամուտները:

4. Վճարողների ցուցակները կազմելու հիմնական փաստաթուղթն են հանդիսանում գյուղխորհրդի տնտեսական գրքերը:

Տնտեսական գրքերի գրանցումների հիման վրա հարկային գործակալը վորոշում է.

ա) տնտեսությունների քանակը ըստ գյուղխորհրդի.

բ) հասարակական վոր խմբակին է պատկանում վճարողը (կոլտնտեսական, մենատնտես, բանվոր, ծառայող, կոոպերացված կամ վոչ կոոպերացված տնայնագործ).

գ) տնտեսությունների ընտանիքի կազմը և ընտանիքների անաշխատունակ անդամների քանակը և նույնպես մինչև 12 տարեկան յերեխաների քանակը.

դ) տնայնագործական–արհեստավորական զբաղմունքների և դրանց վաստակների (արտադնացությունից) յեկամուտների առկայությունը.

ե) տեղեկություններ՝ վարձով աշխատող անձանց մասին (վոր ժամանակից է աշխատում).

զ) տեղեկություններ հաշմանդամների, թոշակառուների և զինվորական ծառայողների մասին.

է) ցանքսերի, խոտհարքների, այգիների և այլ տնկարանների տակ զբաղեցրած հողամասերի չափերը.

ը) տնասունների քանակը և տարիքը:

5. Ընտանիքի անդամների և յեկամուտների աղբյուրների մասին տեղեկությունները հաշվի յեն առնվում առ ցուցակներ կազմելու մոմենտը, իսկ հարկվող տնասունների տարիքը վորոշվում է առ ընթացիկ տարվա 1/VII–ի դրությամբ (իսկ մենատնտես տնտեսություններում առ 1/VIII–ի տվյալներով):

11-28807գր

6. Մինչև վճարողների ցուցակներ կազմելը, հարկային գործակալը պարտավոր է ստուգել գյուղխորհրդի տնտեսական գրքերի գրանցումների ճշտությունը և լրիվությունը:

Տնտեսությունների քանակի ճշտությունն ստուգելու համար, պետք է տնտեսական գրքերի գրանցումները համեմատել գյուղխորհրդի կողմից սպասարկվող տնտեսությունների ցուցակների գրանցումների հետ (գյուղխորհրդի հաշվ. ձև № 4) և նույնպես կոլտնտեսության վարչությունում՝ կոլտնտեսականների տնտեսությունների քանակի մասին յեղած տվյալների հետ:

Հողային տարածությունների չափերի տվյալները պետք է ստուգել շրջգործկոմների հողեր չափող հանձնաժողովների նյութերի հետ:

Պլանային և փաստացի ցանքերի տվյալներն ստուգվում են, ցանքի պլանը ըստ առանձին տնտեսությունների բաշխելու և ցանքի արդյունքների մասին գյուղխորհրդի փաստաթղթային տեղեկությունների հիման վրա (գյուղխորհրդի հաշվառման ձև № 17):

Անասունների քանակի տեղեկություններն ստուգվում են ժողտնտհաշվառման մարմինների կողմից կատարած հունիսյան հաշվառման նյութերի հետ:

7. Տնտեսական գրքերի փաստաղրային ստուգումները վերջացնելուց հետո, հարկային գործակալը բոլոր տնտեսությունների նկատմամբ հարցաքննում է տանտիրոջը կամ ընտանիքի չափահաս անդամներին: Չի թույլատրվում հարցաքննել անչափահաս անդամներին:

Տնատերերի հարցաքննումը պետք է կատարել գյուղխորհրդի գրասենյակում կամ գյուղխորհրդի կողմից հատկացված շենքում:

Այն դեպքում, յերբ տնատերերի հարցաքննումը չի ապահովում ճիշտ տեղեկությունների ստացումը, հարկային գործակալը պարտավոր է այդ տեղեկությունները ստուգել անմիջականորեն տեղում—վճարողի տնտեսությունում:

Հարցաքննումներն անցկացնելու ժամանակ հարկային գործակալը պարտավոր է բոլոր տնտեսությունների նկատմամբ ստուգել տնտեսական գրքերում հետևյալ տվյալները.

ա) ընտանիքի կազմը, ընտանիքի անաշխատունակ անդամների քանակը և նույնպես մինչև 12 տարեկան յերեխաների թիվը։

բ) պլանային և փաստացի ցանքսերի, տնկիների տարածությունները և անասունների քանակը։

Բացի դրանից, տնատիրոջ հարցաքննումն ոգտագործվում է՝ ստանալու տեղեկություններ վոչ գյուղատնտեսական և շուկայական յեկամուտների առկայության և տնտեսության ունեցած շրջանակավոր և կթոցաձև վնեթակների քանակի մասին առ ընթացիկ տարվա հուլիսի մեկի տվյալներ։

8· Հարցաքննման ժամանակ հարկային գործակալը պարտավոր է նախազգուշացնել վճարողին, վոր գյուղատնտեսական հարկի որենքի 33-րդ հոդվածի համաձայն յեկամտի աղբյուրների թաղցնելու համար նա կենթարկվի քրեական պատասխանատվության։

Այն դեպքում, յերբ կպարզվի յեկամտի աղբյուրների թաղցնում, կամ յեկամուտների չափի պակաս ցույց տալու փաստեր, հարկային գործակալը պարտավոր է այդ մասին կազմել ակտ, թվելով վճարողի կողմից թաղցրած յեկամտի աղբյուրները և յեկամուտների չափը։

Այդ ակտը հարկային գործակալը ներկայացնում է շրջանային ֆինանսական բաժնին, վորը պարտավոր է որենքը խախտող հարկ վճարողի գործը ուղարկել ժողդատարան։

Թույլատրվում է հարկել բաց թողնված տնտեսությունները և վերահաշվարկել ընթացիկ տարվա հարկը ամբողջ տարվա ընթացքում—դրույքների, արտոնությունների սխալ կիրառման և յեկամուտների թաղցման դեպքերում։

Հարկման յենթարկել բաց թողնված տնտեսությունները, ինչպես և նախընթաց տարվա հարկերը վերահաշվարկել թույլատրվում է բացառիկ դեպքերում և այն ել միայն Միութենական հանրապետությունների ֆին ժողկոմատների թույլտվությամբ։

Հարկային գործակալի կողմից վճարողների ցուցակներում կատարած ուղղումները պետք է ստուգեն հարկային ավագ տեսուչները և ամեն մի առանձին դեպքում հաստատվեն շրջանային ֆինանսական բաժնի վարիչի կողմից։

9· Բոլոր տնտեսությունների վոչ գյուղատնտեսական յեկամուտների առկայության և չափերի տվյալները և նույնպես

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱՐԱՆ

մենատնտես գյուղացիական տնտեսությունների շուկայական յեկամուտները վորոշվում են։

ա) հիմնարկությունների, կազմակերպություններ և առանձին քաղաքացիների կողմից վճարված գումարների փաստաթղթային տեղեկանքների և

բ) իրենց՝ վճարողների ցուցմունքների հիման վրա։

Բացի այդ տեղեկանքներից, հարկային գործակալը պարտավոր է ոգտագործել գյուղխորհրդի տվյալները, տնտեսական գրքերի դրանցումները և հարցաքննել տեղյակ անձանց։

Այդ անձանց հարցաքննելու ժամանակ, վոչ գյուղատնտեսական վաստակների և նույնպես մենատնտես տնտեսությունների շուկայական յեկամուտների մասին տրվող տեղեկությունները պետք է վերցնել գրավոր, տեղեկություններ տվող անձի ստորագրությամբ։

Վճարողի ցուցմունքները յեկամուտներ ստանալու մասին, պետք է գրանցել ակտում ամեն մի տնտեսության համար առանձին, վորը ստորագրվում է վճարողի և հարկային գործակալի կողմից։

Վճարողների ցուցմունքները հարկային գործակալը պարտավոր է ստուգել գյուղխորհրդից, հիմնարկ-ձեռնարկություններից ստացված և նույնպես ֆինմարմինների կողմից 1939 թվի հունիս ամսում կատարած հաշվառման նյութերի հետ։

10· Գյուղհարկի յենթակա բոլոր տնտեսություններում, վոչ գյուղատնտեսական յեկամուտները (նույն թվում արտադնացությունից ստացվող) ամբողջովին մտցվում են հարկվող յեկամտի մեջ, հաշվի առնելով նախորդ տարվա հուլիսի 1-ից մինչև ընթացիկ տարվա հունիսի 30-ն ընկած ժամանակվա համար։ 1939 թ. հուլիսի մեկից արտադնացության մեջ, չկոոպերացված տնայնագործական-արհեստավորական զբաղմունքներից և այլ, վոչ գյուղատնտեսական վաստակներից ստացված յեկամուտները հարկվում են յեկամտային հարկով։

Փոխադրական արտելի անդամները, վորոնք չեն հանրայնացրել իրենց ձիերը և ունեն վաստակներ ձիերը դրսում աշխատեցնելուց, և նույնպես գյուղատնտեսական աղբյուրներից յեկամուտներ ունեցող գրաբարների վաստակները յենթակա են գյուղհարկի 1939 թ. հունվարի մեկից մինչև հուլիսի մեկը ժամանակվա համար։

Արհեստագործական կոոպերատիվ արտելների անդամների (նույն թվում նաև արհեստագործական կոլտնտեսությունների) արտելից ստացված աշխատավարձը և վաստակները, և նույնպես հիմնարկություններից, ձեռնարկություններից և կազմակերպություններից ստացված ժամանակավոր և պատահական յեկամտային հարկով հարկվող յեկամուտները, գյուղհարկի հարկման չեն յենթարկվում:

11. Վոչ գյուղատնտեսական յեկամուտների շարքն են դասվում՝ անայնա-արհեստավորական զբաղմունքներից ստացվող յեկամուտները, իրեն տնտեսությունից դուրս բանող անասունների ոգտագործումից, չենքերը վարձով տալուց, ձկնորսությունից և վորսորդությունից և նույնպես առանձին քաղաքացիներին մատուցած ծառայությունների համար և այլ վաստակները, վորոնք չեն հարկված յեկամտային հարկով:

Մթերման մարմիններին—հանձնված վորսի, ձկան և մորթիների հումքի համար ստացված վաստակները գյուղհարկի յենթակա չեն:

12. Մենատնտես գյուղացիական տնտեսությունների կողմից չուկայում գյուղատնտեսական մթերքների վաճառքից ստացված յեկամուտները ամբողջովին մտցվում են հարկվող յեկամտի մեջ նախորդ տարվա հուլիսի մեկից մինչև ընթացիկ տարվա հունիսի 30-ն ժամանակվա համար:

Շուկայական յեկամուտները վորոշելու ժամանակ պետք է հաշվի առնվի գյուղատնտեսության բոլոր աղբյուրներից վաճառված մթերքների յեկամուտը, նույնպես չհարկվող տարիք ունեցող անասունների, թռչունների, ճագարների, վայրի պտուղների և սունկերի վաճառքից ստացած յեկամուտը:

Բացի դրանից, մենատնտես տնտեսությունների հարցաքննման միջոցով պետք է հայտարերել այն տնտեսությունները, վորոնք յեկամուտների աղբյուրների հաշվառման անցկացման մոմենտին վաճառել են նախորդ տարվա հուլիսի մեկից հետո հարկվող տարիք ունեցող անասուններ կամ նրա միսը ոգտագործել են անձնական կարիքների համար:

Այդ մասին հարկային գործակալը պետք է նշի ձև № 6-ն հարցաքննման ակտում:

Ցուցմունքները ստուգվում են տնտեսական գրքերի տվյալների հետ և առանձին քաղաքացիների հարցաքննման միջոցով:

13. Հարկային գործակալի նյութերը յեկամուտներ վորոշելու վերաբերյալ ստուգվում են հարկային տեսչի կողմից և հետո հանձնվում հարկային ավագ տեսչին, վորն իր հերթին յուրաքանչյուր տնտեսության համար պետք է տա իր յեզրակացությունը:

Ցուրաքանչյուր տնտեսության յեկամտի չափը հաստատվում է շրջֆինբաժնի վարիչի կողմից:

14. Վճարողների ցուցակները կազմելու ժամանակ անհրաժեշտ է ղեկավարվել հետևյալով.

ա) ձև № 1-ն ցուցակում պետք է մտցնել գյուղխորհրդի ձև № 2 տնտեսական գրքում գրանցված բոլոր կոլտնտեսական տնտեսությունները: Ընդվորում համատեղ հող մշակող ընկերությունների անդամների տնտեսությունների համար պետք է կազմել առանձին ցուցակ:

Ցուրաքանչյուր ցուցակում տնտեսությունները ցույց են տրվում համապատասխան վերնագրի տակ, հետևյալ յերեք խմբերով.

1) անձնական տնտեսություններ չունեցողներ (տնամերձ հողամասեր, կամ անասուն, կամ վոչ գյուղատնտեսական յեկամուտներ).

2) անձնական տնտեսություններ ունեցողներ.

3) տնտեսություններ, վորոնց կազմի մեջ կան ընտանիքի վոչ կոլտնտեսության անդամ առանձին աշխատունակ անդամներ և վորոնք վարձով չեն աշխատում (գյուղհարկի որենքի 10-րդ հոդ. կարգով հարկվողներ).

Նախքան ցուցակների կազմելը, հարկային գործակալը պետք է կոլտնտ. վարչությունից վերցնի տեղեկություններ այն տնտեսությունների մասին, վորոնց կազմում կան աշխատունակ անդամներ, վորոնք կոլտնտեսության անդամ չեն կամ դուրս են յեկել կոլտնտեսությունից և չեն կատարում վարձու աշխատանք.

բ) ձև № 2-ն ցուցակում— մտցվում են գյուղատնտեսություն ունեցող վոչ կոլտնտեսության անդամ բանվորների և ծառայողների, արհեստագործական կոոպերատիվ արտելների անդամների տնտեսությունները, վորոնք յենթակա չեն գյուղհարկի՝ կոլտնտեսականների համար սահմանված դրույքներով (որենքի

11-րդ հոդվ.) այդ տնտեսությունները գրանցված են տնտեսական № 2 գրքում:

Որենքի 11-րդ հոդվածի համապատասխան, կոլտնտեսականների տնտեսությունների հետ միասին միևնույն հիմունքներով են հարկվում բանվորների, ծառայողների և արհեստագործական արտելների անդամների, թոշակառուների, նույնպես հաշմանդամների, կոոպերատիվի միության մեջ մտնող արտելների անդամների և իրենց ձիերը հանրայնացված տրանսպորտի արտելի անդամների այն տնտեսությունները, որոնց տնամերձ հողամասի չափը ընթացիկ տարում չի գերազանցել տվյալ շրջանում կոլտնտեսականների համար սահմանված չափից:

Այդ ցուցակներում մտցվում են նաև վոչ-կոլտնտեսության անդամ հետևյալ տնտեսությունները՝ գինվորական ծառայողները (որենքի 12-րդ հոդ.), տրանսպորտի աշխատողները (որենքի 13-րդ հոդ.) անտառային պահպանության աշխատողները (որենքի 14-րդ հոդ.): Այդ կատեգորիաներին պատկանող տնտեսությունների նկատմամբ ցուցակի «նշումների համար» սյունակում պետք է ցույց տալ որենքի հոդվածը, որի համապատասխան տնտեսությունը մտցված է ձև № 2-ն ցուցակում:

Ցուցակում առանձին վերնագրի տակ պետք է ցույց տալ որենքի 27-րդ հոդվածի կարգով գյուղհարկից ազատվող տնտեսությունները, 4-րդ սյունակում նշելով պաշտոնը:

դ) ձև № 3-ն ցուցակում մտցվում են բոլոր այն տնտեսությունները, որոնք կոլտնտեսության անդամներ չեն և հարկվում են գյուղհարկով՝ մենատնտես գյուղացիական տնտեսությունների համար սահմանված կարգով:

Այս ցուցակներում տնտեսությունները առանձին պետք է ցույց տրվեն (առանձին բլանկներում կամ բլանկի առանձին մասում) յերեք հետևյալ խմբակներով.

1) ձև № 3 տնտեսական գրքերում գրանցված մենատնտես գյուղացիական տնտեսություններ.

2) բանվորների և ծառայողների, կոոպերացրած տնայնագործների և արհեստավորների այն տնտեսությունները, որոնք ունեն գյուղական տնտեսություն, բայց չեն համապատասխանում որենքի 11—14 հոդ. հոդ. պահանջներին և այդ պատճառով հարկվում են գյուղհարկով, մենատնտես տնտեսությունների համար սահմանված հիմունքներով: Այդպիսի տնտեսությունները գրանցված են ձև № 2 տնտեսական գրքերում.

3. գյուղական տնտեսություն ունեցող և մենատնտես տնտեսությունների համար սահմանված ընդհանուր հիմունքներով հարկվող վոչ-կոլտնտեսության անդամ չկոոպերացված տնայնագործների և արհեստավորների տնտեսությունները: Այդպիսի տնտեսությունները գրանցված են ձև № 3 տնտեսական գրքի հատուկ հատվածում:

Տնտեսությունների դասավորումը ըստ վերև հիշված խմբակների կատարվում է ԽՍՀՄ Պետպլանի ԿԺՏՀՎ «1939 թվին ԽՍՀՄ գյուղխորհուրդներում տնտեսական գրքերը վարելու կարգի» մասին հրահանգի համաձայն:

Այս խմբակներից յուրաքանչյուրը—ձև № 3-ն ցուցակում պետք է առանձնացվի համապատասխան վերնագրի տակ.

դ) ձև № 4-ն ցուցակում պետք է գրանցել գյուղատնտեսություն չունեցող և գյուղհարկի վոչ յենթակա բանվորների, ծառայողների, տնայնագործների, արհեստավորների և այլ քաղաքացիների տնտեսությունները:

Այդ տնտեսությունները գյուղխորհուրդներում գրանցված են ձև № № 2 և 3 տնտեսական գրքերում:

Այդ ցուցակը 1939 թվի համար նորից չի կազմվում, այլ ոգտագործվում է ընթացիկ տարվա հունիս ամսում կազմած ձև № 6-ն ցուցակը, միայն պետք է ստուգել և կարիք լինելու դեպքում մտցնել անհրաժեշտ ուղղումներ:

15. Վճարողների ցուցակները և վոչ գյուղատնտեսական և չուկայական յեկամուտների առկայության և չափերի հաշվառման ակտերը լրացնելու ժամանակ հարկային գործակալը պարտավոր է միաժամանակ համապատասխան ցուցակներում «նշումների համար» հատկացրած սյունակում իր ստորագրությամբ ցույց տալ տեղեկություններ, որոնց պետք է տրվի որենքի 22, 23 և 24 հոդ. հոդ. նախատեսված արտոնությունները:

«Նշումների» համար հատկացրած սյունակում պետք է ցույց տրվեն տեղեկություններ նաև այն տնտեսությունների նկատմամբ, որոնք ազատվում են հարկից որենքի 28-32 հոդ. հոդ. համաձայն, կցելով արտոնություններ ստանալու իրավունքի

փաստաթղթերը (հիմնարկությունների, ձեռնարկությունների փաստաթղթերը, վերաբնակեցման տոմսի №-ը, թիվը և այլն)։

16. Որենքի 28-րդ հոդ. կարգով արտոնություններ տրվում են այն կոլտնտեսական տնտեսություններին, որոնք վերաբնակեցված են պլանային կարգով 1937 թ. հունվարի մեկից հետո և վերաբնակվելու յեն մեկ հանրապետությունից, յերկրից, և մարզից մեկ ուրիշը, ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1937 թ. 17/XI № 115/2043 «Վերաբնակվողներին տրվող արտոնությունների» վորոշման կարգով։

Մենատնտես տնտեսություններին այդ արտոնությունները տրվելու յեն այն դեպքում, յեթե մտել են կոլտնտեսություն այդ նոր բնակավայրում։

17. Այն կոլտնտեսական և մենատնտես տնտեսությունները, որոնք մինչև 1930 թ. ապրիլի մեկը պլանային կարգով վերաբնակվել են նախկին Հեռավոր-Արևելքի, Կարելիայի ԱԽՍՀ և նախկին Մուրմանսկի ոկրուգում, նույնպես այն տնտեսությունները, որոնք վերաբնակվել են պլանային կարգով 1930 թ. ապրիլի մեկից հետո, հարկային արտոնություններ տրվում են ԽՍՀՄ կառավարության նախկին վորոշումների հիման վրա։

Միութենական և ավտոնոմ հանրապետությունների ֆինժողկոմատները, մարզային և յերկրային ֆինբաժինները պարտավոր են հայտնելու շրջֆինբաժիններին, և վերջիններս՝ իրենց հերթին հարկային գործակալներին, թե ովյալ վայրում ինչպիսի արտոնություններ են տրված պլանային կարգով վերաբնակվողներին։

18. Որենքի 32-րդ հոդ. կարգով արտոնություններ են տրվում այն կոլտնտեսական տնտեսություններին, որոնք աշխատում են ԽՍՀՄ ԺԿԽ կից Տնտեսական Խորհրդի 1938 թ. նոյեմբերի 15-ի № 782 վորոշմամբ սահմանված կարգով «Անտառային մթերումների գծով աշխատող կոլտնտեսականներին գյուղհարկից ազատելու մասին»։

Այդ վորոշման կարգով գյուղհարկի վճարումից ազատվում են այն տնտեսությունները, վորոնց ընտանիքի աշխատունակ անդամը կոնտրակտացիայի յե յենթարկվել կամ ինքնատմրացվել և մեկ տարուց վոչ պակաս ժամանակով պետական անտառամթերման աշխատանքներին։

Նրանցից պահանջվելիք հարկերի դումարները յենթակա յեն գիջման միայն այն ժամկետների համար, վորոնք աշխատանքի անցնելու ժամանակին դեռ չեն հասել։ Իրենց վրա վերցրած պարտավորությունները չկատարելու դեպքում հարկը գանձվում է նրանցից ընդհանուր հիմունքներով։

19. Վճարողների յեկամուտների աղբյուրների և հարկի հաշվարկման աշխատանքները ամենուրեք պետք է վերջացվեն մինչև հոկտեմբերի 10-ը։

Վճարողների ցուցակները բոլոր հաշվառման նյութերի հետ միասին հարկային գործակալները ներկայացնում են շրջֆինբաժին հարկային ավագ տեսչին՝ ստուգելու, և շրջֆինբաժնի վարիչին՝ հաստատելու համար։

20. Ցուրաքանչյուր տնտեսության հարկվող յեկամտի և հարկի հաշվարկումը պետք է կատարվի շրջֆինբաժնում, հարկ. ավագ տեսչի ղեկավարությամբ, ներգրավելով այդ աշխատանքներին ֆինբաժնի ապարատից ձեռնհաս աշխատողներին։

21. Հարկվող յեկամտի հաշվարկումը պետք է կատարել միութենական հանրապետությունների ժողկոմխորհների կողմից ովյալ շրջանի համար առանձին գյուղատնտեսական աղբյուրների նկատմամբ սահմանված յեկամտաբերության նորմաներով (ցանքսերի տնկարանների և անասունների)։

Գյուղհարկով հարկվող վոչ գյուղատնտեսական վաստակների յեկամուտները մտցվում են վճարողների ցուցակների մեջ շրջֆինբաժնի վարիչի կողմից հաստատված հարցաքննման ակտերի և հաշվառման նյութերի հիման վրա։

Մենատնտես գյուղացիական տնտեսությունների և նրանց հարկման հավասարեցված վոչ կոլտնտեսության անդամ ուրիշ տնտեսությունների շուկայական յեկամուտները և հարկվող տարբեր ունեցող վաճառված անասունների կամ իրենց կարիքների համար ոգտագործած մսի մասին տվյալները մտցվում են վճարողների ցուցակների մեջ շրջֆինբաժնի վարիչի կողմից հաստատված հարցաքննման ակտերի հիման վրա։

Այդ տվյալները գրանցվում են ձև № 3-ն ցուցակի 39-րդ սյունակում։

22. Ցուրաքանչյուր տնտեսության գյուղհարկի յենթակա հարկվող յեկամուտը վորոշելուց հետո կատարվում է հարկի հաշվարկում և արտոնությունների կիրառում, ընդ վորում ա-

առաջին հերթին տրվում են այն արտոնությունները, որոնց համաձայն տնտեսությունը լրիվ ազատվում է հարկից, իսկ հետո կիրառվում են մնացած տնտեսություններին տրվող արտոնությունները:

Վճարողների ցուցակներում «Արտոնության անվանում» սյունակում պետք է նշել որենքի այն հոդվածը, որի հիման վրա տնտեսությանը համապատասխան արտոնություն է տրված:

23. Վճարման յենթակա հարկի գումարը առանց արտոնությունների գումարի գրվում է ցուցակի համապատասխան սյունակում և սրա հետ միասին դուրս է գրվում վճարման ծանուցագիր: Կոլտնտեսականների և կոլտնտեսականների դրույքներով հարկվող բանվորների, ծառայողների և արհեստագործական արտելների անդամների տնտեսությունների համար դուրս է գրվում ձև № 7-ն վճարման ծանուցագիր, իսկ գյուղացիական մենատնտեսների և նրանց համար սահմանված հիմունքներով հարկվող այլ տնտեսությունների համար դուրս է գրվում ձև № 8-ն ծանուցագիր, ընդվորում հաշվարկված հարկի գումարից պետք է դուրս հանել արտոնությունների գումարը և գրանցել ծանուցագրի առաջին յերեսի — առաջին տողում առանց բաշխելու ըստ վճարման ժամկետի, իսկ մյուս յերեսում գրվում է «Յենթակա յե վճարման» տողում:

Այդ աշխատանքները կատարելուց հետո պետք է լրացվեն վճարման ծանուցագրերը հանձնելու տեղեկագրերը (ձև № 9-ն) և հարկային գործակալները հերթականությամբ կանչվում են շրջֆինբաժին, իրենց հետ բերելով վճարողների անձնական հաշիվները:

24. Անձնական հաշիվների գրանցումների հիման վրա հարկային գործակալը հարկային տեսչի և ավագ տեսչի ղեկավարությամբ պարտավոր է վճարման ծանուցագրի մեջ լրացուցիչ ցույց տալ հետևյալ տեղեկությունները.

ա) առ ծանուցագիր դուրս գրելու որը անցյալ տարվա ապառքի գումարը հաշվարկված տուժի հետ միասին, ընդ վորում սեպտեմբերի մեկից հետո տուժը պետք է որը հաշվել 0,2%-ից, իսկ ընթացիկ տարվա գյուղհարկի համար տուժը դանձվում է նոյեմբերի մեկից:

բ) մյուս յերեսում պետք է ցույց տալ առ վճարման ծանուցագիր դուրս գրելու որը վճարման հարկի գումարը և վորոշել ապառքի հետ միասին վճարման յենթակա գումարը.

գ) Ծանուցագրի առաջին յերեսում պետք է նշել յենթակա յե վճարման 1939 թվին, դուրս հանելով վճարված գումարները և բաշխել ըստ վճարման ժամկետների, ընդ վորում վերջին ժամկետին (դեկտեմբերի մեկին) պետք է հաշվել ծանուցագրի վերին տողում գրված հարկի գումարի 1/3-րդ մասը, իսկ մնացած վճարման յենթակա գումարը գրել առ մեկը նոյեմբերի ժամկետին: Դրա հետ միաժամանակ հարկային գործակալը պետք է գրանցումներ կատարի վճարողների անձնական հաշիվներում:

25. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի 1939 թ. սեպտեմբերի մեկի որենքի հիման վրա հաշվարկված գյուղհարկի գումարները վճարողների անձնական հաշիվներում պետք է գրանցել հետևյալ ձևով.

ա) այն վճարողների նկատմամբ, վորոնք մինչև նոր վճարման ծանուցագրեր ստանալն արդեն մուծել են ընթացիկ տարվա հարկի մի մասը, լրացվում է «Մնում է վճարելու» հետևյալ տողը, նշելով վերջին յերկու ժամկետներին վճարման յենթակա գումարները, իսկ «Ընդամենը վճարներ» սյունակում գրվում է վճարման ծանուցագրի մեջ նշված վճարման յենթակա ընդհանուր գումարը, դուրս հանած արդեն վճարված գումարները:

Անձնական հաշվի վերին ազատ տողում գրվում է «Լրացուցիչ հաշվարկված է», իսկ «Ընդամենը վճարումներ» սյունակում նշվում է լրացուցիչ հաշվարկված գումարը, առանց վճարման ժամկետների բաշխելու:

Յեթե ըստ նոր վճարման ծանուցագրի վճարման յենթակա գումարն ավելի պակաս կստացվի քան նախորդ տողում ցույց տրված մնացած գումարը, այդ դեպքում ազատ տողում պետք է գրել «Զիջված», իսկ «Ընդամենը վճարումներ» տողում գրվում են նշված գումարների տարբերությունները.

բ) այն վճարողների նկատմամբ, վորոնք չեն մուծել նախկինում հաշվարկված գումարները և նրանց վրա չի հաշվվում նախկին տարվա ապառք, անձնական հաշիվներում գրանցումները կատարվում են վերը նշված կարգով.

գ) այն վճարողների նկատմամբ, վորոնց վրա հաշվվում է անցյալ տարվա ապառք և հետևաբար տեղի չեն ունեցել ընթա-

ցիկ տարվա հարկի վճարումները «Մնում է վճարելու» տողում բացի նոր ծանուցագրով ընթացիկ տարվա վճարման յենթակա գումարից, ցույց է տրվում առ ծանուցագիր դուրս գրելու որը հաշված ապառքի և հաշվարկված տուժի գումարը:

Ապառ տողում գրվում է «Լրացուցիչ հաշվարկված է» կամ «Զիջված է» նույն վճարման ծանուցագրում ցույց տրված հարկի գումարն և անձնական հաշվի նախորդ տողում ցույց տրված վճարման յենթակա գումարն:

26. Այն վճարողների նկատմամբ, որոնք առաջ չեն յեղել հարկված դյուղհարկով, նոր անձնական հաշիվները բացվում են ընդհանուր հիմունքներով:

27. Վճարման ծանուցագրերը լրիվ ձեվակերպելուց և անհրաժեշտ տվյալներ անձնական հաշիվներում գրանցելուց հետո, հարկային ավագ տեսուչը ստուգում է ծանուցագրերում և անձնական հաշիվներում կատարած գրանցումները, որից հետո ծանուցագրերը ստորագրում, կնքում և հանձնում է հարկային գործակալին, որը պարտավոր է անմիջապես մեկնել դյուղխորհուրդ և ծանուցագրերը հանձնել վճարողներին, վերցնելով այդ մասին ստորագրություններ ձեվ № 9-ն տեղեկագրում, նշելով հանձնման թիվը և որը:

28. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի 1939 թ. սեպտեմբերի 1-ի օրենքի հիման վրա հաշվարկված դյուղհարկի հաշվեմատյանների ձեվերի և ժամկետների մասին կհայտնվի լրացուցիչ:

Նախկին օրենքի համաձայն սահմանված ձեվ № 49 հաշվեմատյանը պետք է կազմվի և ներկայացվի ԽՍՀՄ ՖԺԿ:

ԽՍՀՄ ՖԺԿ-ի ՀԱՐԿԵՐԻ ՑԵՎ ՏՈՒՐԲԵՐԻ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Մ. ԿԱՐԱԳՈՒՆԻՆ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՍԵԿՏՈՐԻ
ՊԵՏ՝ Ն. ԲԵՍՍՈՆՈՎ.

Պատ. խմբագիր՝ Երվին
Թարգմ.՝ Ռ. Ավագյան
Սրբագրիչներ՝ Գար. Հակոբյան և Բ. Զուկասյան

Վյավլիտի լիազոր՝ Վ.—1103
Պատվեր 761. Տիրաժ 1300.
Թուղթ 62×94. Տպագր. 1 մամ.
Մեկ մամ. 38400 նշան.
Հանձնված է արտադրության 26 IX 1939 թ.
Ստորագրված է տպագրության համար 27 IX 193
Պետհրատի I տպարան, Ցերև.

ՀՀ Ազգային գրադարան
NL0977713

11 ОКТ. 1939 490
10
11
28807

О ПОРЯДКЕ ПРОВЕДЕНИЯ УЧЕТА ПЛАТЕЛЬЩИКОВ, ОПРЕДЕЛЕНИЯ ДОХОДОВ И ИСЧИСЛЕНИЯ СЕЛЬХОЗНАЛОГА В 1939 ГОДУ